ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/66

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Խաչպար» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Բալասանյանի,
«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Կ. Դրամբյանի, Տ. Ջիլավյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52» ծածկագրով բաց մրցույթ, բժշկական պարագաների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 15.05.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում փոփոխություն կատարելու մասին՝ համապատասխանեցնելու համար Հրավերի բողոքարկվող Հավելվածները ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված «Օրինակելի ձև»-երին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 15.05.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/66 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

26.05.2020թ.-ին և 05.06.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.06.2020թ.-ին:

2. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն 15.05.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ն <<Բժշկական պարագաների>> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52>> ծածկագրով բաց մրցույթի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2020 թ. մայիսի 12-ի թիվ 1 որոշմամբ (կից փաստաթուղթ թիվ 1):

Հրավերով գնման առարկա է հանդիսանում բժշկական պարագաների ձեռքբերումը Հրավերի թվով 15 չափաբաժիններով (կից փաստաթուղթ թիվ 2):

Հրավերի <<ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> Հավելված թիվ 6-ը՝ այդ թվում նաև 3.3 կետը (կից փաստաթուղթ թիվ 3, արված նշումները), չեն համապատասխանում ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված <<Օրինակելի ձև>>-ով սահմանված պահանջներին (կից փաստաթուղթ թիվ 4, արված նշումները):

Հրավերի <<ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> Հավելված թիվ 6-ի <<ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ>> Հավելված թիվ 2-ը (կից փաստաթուղթ թիվ 5, արված նշումները) չի համապատասխանում <<Օրինակելի ձև>>-ով հաստատված Հավելված թիվ 2-

ին (կից փաստաթուղթ թիվ 6), բացի այդ՝ Հավելված 2-ում նշված <<....90 օրվա ընթացքում....>> սահմանումը (կից փաստաթուղթ թիվ 5, արված նշումները) չի համապատասխանում <<Օրինակելի ձև>>-ի Հրավերի պայմանագրի 3.3. կետով ամրագրված <<....30 աշխատանքային օրվա ընթացքում....>> սահմանումներին (կից փաստաթուղթ թիվ 4, արված նշումները):

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ –ի <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52>> ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2020թ. մայիսի 4-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ <<Բժշկական պարագաների>> ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52>> ծածկագրով բաց մրցույթի Հրավերի ընթացակարգը և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ–ի <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52>> ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52>> ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում փոփոխություն կատարելու մասին՝ համապատասխանեցնելու համար Հրավերի բողոքարկվող Հավելվածները ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված <<Օրինակելի ձև>>-երին:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Ներկայացված փաստաթղթերը փաստում և ապացուցում են, որ <<Նորք-Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ–ի <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52>> ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 2020թ. մայիսի 12-ի 1 որոշմամբ հաստատված Հրավերի <<ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>> Հավելված թիվ 6-ի 3.3 կետը, այդ պայմանագրի անբաժանելի մաս համարվող <<ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ>> Հավելված թիվ 2-ը չեն համապատասխանում ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված համապատասխան <<Օրինակելի ձև>>-երին:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է՝ պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգում փոփոխություն կատարելու մասին՝ համապատասխանեցնելու համար Հրավերի բողոքարկվող Հավելվածները ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված «Օրինակելի ձև»-երին:

«Խաչպար» ՍՊԸ-ն 25.05.2020թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

«Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի սահմանումների, Օրենքի հիմնարար սկզբունքներից թիվ 1-ինը նշված է <<1) գնման գործընթացի միասնական կանոններով .... կազմակերպում.>> սկզբունքը, որն իրականացնելու նպատակով՝ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 5-րդ հոդվածի սահմանումների՝ ՀՀ Կառավարությունը <<....հաստատում է՝ 8) հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները.>>, իսկ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 16-րդ հոդվածի սահմանումների՝ լիազորված մարմինը՝ տվյալ պարագայում ՀՀ Ֆինանսների նախարարությունը, <<8) հաստատում է գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ՝ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը.>>:

<<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի ոչ մի հոդվածում գոյություն չունի որևիցե մի դրույթ, որը բացառության կարգով թույլ է տալիս որևիցե մի բացառիկ Պատվիրատուի՝ տվյալ դեպքում՝ <<Նորք Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ին, խախտելու լիազորված մարմնի՝ տվյալ պարագայում՝ ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից ՀՀ ՖՆախարարի 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված <<Օրինակելի ձև>>-երից որևիցե մեկը:

Լրացուցիչ կերպով տեղեկացնում եմ Ձեզ, որ <<Նորք Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ն հաճախակի է իրեն պատկերացնում որպես բացառիկ Պատվիրատու, տարիներ շարունակ փորձելով խախտել լիազորված մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևերը՝

2017թ. փետրվարի 24-ին, 2019թ. դեկտեմբերի 4-ին, 11-ին և 24-ին <<Նորք Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ն հայտարարություններ էր հրապարակել <<ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-17/19>>, <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/21>>, <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/23>> և <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/28>> ծածկագրերով մրցույթների մասին, որոնց Հրավերները նույնպես կազմված են եղել ՀՀ ՖՆ 2016թ. հուլիսի 20-ի թիվ 605-Ա հրամանով և ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված <<Օրինակելի ձև>>-երով սահմանված պահանջների խախտումներով (ի լրումն՝ կից փաստաթղթեր թիվ 1, թիվ 2 և թիվ 3, էջեր՝ 1-3, արված նշումները):

2017թ. փետրվարի 28-ին, 2019թ. դեկտեմբերի 16-ին, 24-ին և 27-ին <<Խաչպար>> ՍՊԸ-ն բողոքարկել է այդ հրավերների ընթացակարգերը ՀՀ Գնումների Բողոքարկման Խորհրդին և ՀՀ Գնումների հետ կապված բողոքները քննող անձին:

2017թ. մարտի 20-ին, 2020թ. հունվարի 9-ին, 23-ին և 29-ին կայացվել են <<ԳԲԽ թիվ 25/17>>, <<ԳԲՔԱ-ՆԳ-2019/88>>, <<ԳԲՔԱ-ՆԳ-2019/97>> և <<ԳԲՔԱ-ՆԳ-2019/101>> իրավապարտադիր որոշումները, որոնցով բավարարվել են <<Խաչպար>> ՍՊԸ-ի

բողոքները և պարապադրվել է <<Նորք Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ին, որպեսզի մրցույթների հրավերներում կատարեն համապատասխան փոփոխություններ:

<<Նորք Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ի կողմից ոչ միայն դատական կարգով չեն բողոքարկվել այդ 4 իրավապարտադիր որոշումներից և ոչ մեկը, այլ հակառակը՝ այդ փոփոխությունները կատարվել են <<Նորք Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ի կողմից, որից հետո՝ 2017թ. մարտի 22-ին, 2020թ. հունվարի 15-ին և փետրվարի 3-ին հրապարակվել են այդ փոփոխված Հրավերները, որոնք արդեն չեն բողոքարկվել <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից, քանի որ դրանք համապատասխանեցվել են ՀՀ ՖՆ 2016թ. հուլիսի 20-ի թիվ 605-Ա հրամանով և ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված <<Օրինակելի ձև>>-երով սահմանված պահանջներին (ի լրումն՝ կից փաստաթղթեր թիվ 4, թիվ 5 և թիվ 6, էջեր՝ 1-3, արված նշումները):

<<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից չեն բողոքարկվել նաև <<Նորք Մարաշ>> ԲԿ>> ՓԲԸ-ի կողմից 2020թ. փետրվարի 12-ին և մարտի 2-ին հայտարարված <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/37>> և <<ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/39>> ծածկագրերով մրցույթների Հրավերները, քանի որ դրանք նույնպես կազմված են եղել ՀՀ ՖՆ 2019թ. նոյեմբերի 4-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված <<Օրինակելի ձև>>-երով սահմանված պահանջներին համապատասխան (ի լրումն՝ կից փաստաթղթեր թիվ 7 և թիվ 8, էջեր՝ 1-3, արված նշումները):»:

3. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 15.05.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/7240-2020 գրությամբ դիմել է «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 15.05.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 26.05.2020թ-ին հրավիրված նիստին:

Պատվիրատուն 19.05.2020թ.-ին թիվ 08-160 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 15.05.2020թ. ներկայացված բողոքի, հայտնում ենք հետևյալը.

ՀՀ Ֆինանսների նախարարի 04.11.2019թ. թիվ 597-Ա հրամանով հաստատվել են գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը: «Օրինակելի ձև» արտահայտությունը չի ենթադրում ձևանմուշից շեղվելու անհնարինություն: Ցանկացած օրինակելի ձևում պարտադիր պայման է հանդիսանում բովանդակային պահանջների պահպանումը:

Վերոնշյալ 597-Ա հրամանով հաստատված բոլոր հրավերներում հայտը պատրաստելու հրահանգում ներառված է դրույթ, համաձայն որի, «Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները», ինչը ևս մեկ անգամ հիմնավորում է բովանդակային պայմանների պահպանմամբ օրինակելի ձևից շեղվելու օրինաչափությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 13-րդ հոդվածի համաձայն՝ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:»:

Ելնելով վերոգրյալից՝ յուրաքանչյուր Պատվիրատու կախված իր գործունեության համար անհրաժեշտ գնման առարկայից, ինքն է որոշում դրանց բնութագրերը՝ այդ թվում ձեռքբերման և վճարման պայմանները: Պատվիրատուներն օրենքի շրջանակում կաշկանդված չեն իրենց կողմից հայտարարվող յուրաքանչյուր գնման ընթացակարգի համար կիրառել միատեսակ վճարման պայմաններ, ընդհակառակը, Պատվիրատուն հաշվի առնելով իր կարիքները և ֆինանսական հնարավորությունները, տարբեր ընթացակարգերում կարող է կիրառել տարբեր մոտեցումներ, մասնավորապես կանխավճարի, ապրանքը սահմանված կարգով ընդունելուց հետո օրական, ամսական կամ եռամսյակային վճարումներ: «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52 ծածկագրով հայտարարված բաց մրցույթի շրջանակում սահմանվել է առավել քան հստակ վճարման պայման՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունները:

Քննարկման ենթակա այս հարցերի շուրջ բժշկական կենտրոնը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն, և ստացել պատասխան, որով հիմնավորվում է հրավերի համապատասխանությունը օրենսդրության պահանջներին (գրությունները կցվում են):

«Խաչպար» ՍՊԸ կողմից ներկայացված բողոքում հղում է կատարվել հրավերի պայմանագրի 3.3 կետին, սակայն մատնանշված կետը վերջինիս կողմից մեկնաբանվել է ոչ ճիշտ: Այսպես, պայմանագր 3.3 կետը սահմանում է. «Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը»: Սույն կետը վճարման պայմաններ սահմանելու եղանակներից մեկն է և պարբերության 2-րդ մասը բխում է առաջինից: Եթե ֆինանսական միջոցները նախատեսված չեն այն ամսում, որում նախատեսված է ապրանքի մատակարարումը, ապա վճարումը բնականաբար կատարվում է այն ամսում, որում նախատեսված են ֆինանսական միջոցներ: Այսինքն, եթե պատվիրատուն վճարման ժամանակացույցով նախատեսել է որոշակի գումար որևէ կոնկրետ ամսում, ապա ապրանքը ընդունելու դեպքում նա կրում է պարտավորություն, այդ գումարը վճարել հենց այդ ամսում (այլ ոչ թէ 30 օրում), բացառությամբ եթե արձանագրությունը կազմվել է հենց այդ ամսվա 20-ից հետո ապա, վճարումը կարող է կատարվել ոչ թէ պարտադիր հենց աւռ ամսում, այլ 30 օրվա ընթացքում: Բայց վճարման ժամանակացույցում որևէ ամսում կոնկրետ գումար նախատեսելը, դա Պատվիրատուի իրավունքն է, ինչը սահմանված է օրենքով:

Ամփոփելով վերոնշյալ տեղեկությունները գտնում ենք, որ ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը լիովին համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին և բողոքը հիմնավոր չէ:»:

Պատվիրատուն 25.05.2020թ.-ին թիվ 08-176 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի պատասխան ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ «Խաչպար» ՍՊԸ կողմից 25.05.2020թ. ի լրումն բողոքի, հայտնում ենք հետևյալը.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

2-րդ հոդվածը սահմանում է.

13) լիազորված մարմին՝ պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմին /տվյալ պարագայում ՀՀ Ֆինանսների նախարարություն/:

16-րդ հոդվածը սահմանում է

2. Գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը՝

2) պատվիրատուներին մեթոդական օժանդակություն է ցուցաբերում գնումների գործի կազմակերպման հարցում:

Հաշվի առնելով վերոգրյալը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն հայտնում է հետևյալ դիրքորոշումը.

Պատվիրատուի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգով բոլոր հնարավոր մասնակիցների համար սահմանվել են միևնույն միասնական կանոններ: Պատվիրատուները մեթոդական օժանդակություն ստանալու համար կարող են դիմել ՀՀ Ֆինանսների նախարարություն և առաջնորդվել վերջինիս կողմից տրված պատասխաններով: Ինչ վերաբերում է 2020թ. կարիքների համար հայտարարված գնման ընթացակարգերի մասով ներկայացված բողոքներին և դրանց վերաբերյալ կայացված որոշումներիին, ապա այդ ընթացակարգերը հայտարարված են եղել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջների կիրառմամբ, որը հրավերով չի նախատեսում վճարման ժամանակացույթի սահմանում, ուստի այդ ընթացակարգերը չի կարելի համեմատել ներկայիս բողոքարկված գնման ընթացակարգի հետ:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը լիովին համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին և բողոքը հիմնավոր չէ:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/66 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 12.05.2020թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի տեքստը հաստատվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.05.2020թ. թիվ 1 որոշմամբ: Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 27.05.2020թ.-ին:

Հրավերով հաստատվել է թիվ 6 հավելվածը՝ ապրանքի մատակարարման պայմանագրի նախագիծը (այսուհետ նաև՝ պայմանագրի նախագիծ), այդ թվում նաև՝ պայմանագրի թիվ 1 հավելվածը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը և թիվ 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը:

Պայմանագրի նախագծի՝ «Պայմանագրի գինը և վճարման կարգը» սահմանող 3-րդ կետի 3.3 ենթակետի համաձայն՝ գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով նախատեսված կարգով:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով, սահմանվել է, որ վճարումն իրականացվելու է ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակը սահմանված կարգով ընդունելու օրվանից հաշված 90 օրվա ընթացքում:

ՀՀ ֆինանսների նախարարի 2019 թվականի 04 նոյեմբերի թիվ 597-Ա հրամանով (այսուհետ նաև՝ Հրաման) հաստատվել են գնման ընթացակարգերի կազմակերպման ընթացքում օգտագործվող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերը:

Հրամանով հաստատվել է վճարման ժամանակացույցի հետևյալ օրինակելի ձևը.

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %	… %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

Ընթացակարգի հրավերով վճարման ժամանակացույցը նախատեսվել է հետևյալ ձևով.

Հավելված N 2
« » 2020թ. կնքված
ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ փաստացի մատակարարումների հետևյալ պայմանով՝

բոլորը	բոլորը	բժշկական պարագաներ	Վճարումն իրականացվելու է Ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակը սահմանված կարգով ընդունելու օրվանից հաշված 90 օրվա ընթացքում:	**100%**

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 15.01.2020թ.-ին տրված 01.1/26-1/318-2020 պարզաբանման համաձայն՝ … ՀՀ ֆինանսների նախարարի 04.11.2019թ. թիվ 597-Ա հրամանով հաստատված գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերում պատվիրատուների կողմից կարող են կատարվել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը չհակասող փոփոխություններ: Միաժամանակ հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Վերոգրյալով պայմանավորված ՀՀ ֆինանսների նախարարությունը գտել է, որ վճարման ժամանակացույցը կարող է չսահմանվել պայմանագրի առանձին հավելվածով՝ վճարումների կատարման պայմանները և ժամկետները նախատեսելով պայմանագրում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 15.05.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինը հաստատում է գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի, ներառյալ՝ հրավերի և պայմանագրի օրինակելի ձևերը:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշ-

տությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված

խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ ապրանքների գնման դեպքում հրավերով սահմանվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 12.05.2020թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52» ծածկագրով բաց մրցույթ՝ Ընթացակարգի հրավերի տեքստը հաստատվել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.05.2020թ. թիվ 1 որոշմամբ: Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 27.05.2020թ.-ին:

Հրավերով հաստատվել է թիվ 6 հավելվածը՝ ապրանքի մատակարարման պայմանագրի նախագիծը (այսուհետ նաև՝ պայմանագրի նախագիծ), այդ թվում նաև՝ պայմանագրի թիվ 1 հավելվածը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը և թիվ 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը:

Պայմանագրի նախագծի «Պայմանագրի գինը և վճարման կարգը» սահմանող 3-րդ կետի 3.3 կետի համաձայն՝ գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով նախատեսված կարգով, համաձայն որի՝ սահմանվել է, որ վճարումն իրականացվելու է Ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակը սահմանված կարգով ընդունելու օրվանից հաշված 90 օրվա ընթացքում:

Հրամանով հաստատված բաց մրցույթի հրավերի օրինակելի ձևով սահմանված Ընթացակարգի հրավերի վճարման ժամանակացույցով նախատեսված է, որ վճարումները պետք է իրականացվեն ըստ ամիսների:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը փաստում է, որ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով սահմանված վճարումը 90 օրվա ընթացքում իրականացնելու պայմանը հակասում է Հրամանով հաստատված բաց մրցույթի

հրավերի օրինակելի ձևով սահմանված Ընթացակարգի հրավերի վճարման ժամանակացույցի պայմաններին:

Ընդ որում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 15.01.2020թ.-ին տրված 01.1/26-1/318-2020 պարզաբանմամբ հստակ նշվել է, որ ՀՀ ֆինանսների նախարարի 04.11.2019թ. թիվ 597-Ա հրամանով հաստատված գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերում պատվիրատուների կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությանը չհակասող փոփոխություններ կարող են կատարվել, այն դեպքում, եթե դրանք ելնում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներից, համաձայն որոնց՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով սահմանված վճարումը 90 օրվա ընթացքում իրականացնելու պայմանը հակասում է նաև Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին, այն հստակ չի նկարագրում ձեռք բերվող ապրանքի դիմաց վճարման պայմանները, ժամկետները, որպիսի պայմաններում խախտվում են Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Ուստի նման պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հրավերում անհրաժեշտ է կատարել փոփոխություն, այն է՝ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52» ծածկագրով բաց մրցույթի հրավերի թիվ 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը, պետք է համապատասխանեցնել ՀՀ ֆինանսների նախարարի 04.11.2019թ.-ի թիվ 597-Ա հրամանով հաստատված բաց մրցույթի հրավերի օրինակելի ձևին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 15.05.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/66 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/52» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին կատարել սույն որոշմամբ նշված փոփոխությունները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**